



ՍԵՐՁԵՂ ԴՈՎԼԱԹՈՎ

ԿՈՄԱՅՐՈՄԻՍՆԵՐ

Կոմայրոմիս երկրորդ

(«Սովետական Էստոնիա»: Հունիս: 1974 թ .)

«ՔԱՄՈՒ ԱԽՈՅԱՆՆԵՐԸ (Տալլինի ձիարշավարանը 50 տարեկան է):
Հանրահայտ ժոկեյները, հանդիսատեսի կոտորները նախեստառաջ գիտակ
անասնաբույծներ են, որ համառ հետետողականությամբ կատարելագործում են
նժույգի ցեղը, զարգացնում են իրենց «հովանավորյալների» ժառանգական
հատկանիշները: Նրանք նաեւ բարձր որակավորում ունեցող մարզիկներ են եւ
ամեն շաբաթ հաշվետու են Տալլինի խստապահանջ հանդիսատեսին: Հիսուն
տարվա ընթացքում մարզիկները բազմաթիվ մրցանակներ ու դիպլոմներ են
նվաճել, իսկ 1965 թվականին վարպետ-ձիավար Անտոն Դուկալսկին Տալինի
հովատակով նվաճել է համամիութենական մեծ մրցանակը: Տալլինի
ձիարշավարանի աստղերից առանձնանում են հմուտ վարպետներ Լ .
Յուրգենսը, Է . Իվեսը, Խ . Հիմմիստեն: Մեծ հույսեր է ներշնչում երիտասարդ
մարզիկ Ա . Իվանովը:

Ի նշանավորումն հոբելյանի՝ օգոստոսի 1-ին ձիարշավարանում տեղի կունենա
տոնակատարություն»:

Տալլինի ձիարշավարանը իրենից բավականին խղճուկ տեսարան է
ներկայացնում: Աղբաժածկ մրցադաշտ, կիսաքանդ տրիբունաներ: Ամենուր
օգտագործված տոմսերի կտորտանք է: Գրգռված, բարձրախոս ամբոխը
հետուառաջ է շարժվում բարի ու բազրիքի միջեւ:

Ձիարշավարանը միակ տեղն է, ուր տարլցովի էժանագին պորտվեյն են վաճառում: Դրամարկդը վաճառում է երկու տեսակի տոմսեր՝ էքսպրեսներ եւ գույգեր: Էքսպրես տոմս պատվիրելիս հարկավոր է առաջատարներին գուշակել այն հերթականությամբ, որով նրանք հատում են վերջնագիծը: Չույգերի դեպքում գուշակում եք եզրափակիչ դուրս եկած երկու ուժեղագույններին՝ ցանկացած հերթականությամբ: Չույգ տոմսի շահույթը համապատասխանաբար ավելի փոքր է: Ֆավորիտների համար էլ քիչ են տալիս: Նրանց օգտին են խաղագումարներ դնում բոլոր նորեկները: Նշանակալի գումար են բերում պատահաբար առաջ ընկած վատ ձիերը: Ֆավորիտին գուշակելը դժվար չէ: Դժվարը անսպասելին կանխատեսելն է՝ քոտոտ մի ձիու հաղթանակը կանխատեսելը: Վարպետ ձիավարները մեծ փողերի դիմաց ետ են պահում ֆավորիտներին: Հմտորեն ետ մնալը նույնպես արվեստ է: Դա ավելի դժվար է, քան հաղթելը: Առջեւում հայտնվում են միջակ ձիերը: Շահումները երբեմն հասնում են հարյուր հիսուն ռուբլու: Լավ ձիավարները, սակայն, հազիվ թե ձեզ հետ գործ բռնեն: Նրանց հաճախորդները պատկառելի մարդիկ են: Ավելի հեշտ է պայմանավորվել երրորդ կարգի ժոկեյներից մեկի հետ: Նրան արգելված է խաղագումարներ դնել: Նրանք խաղում են դրածո մարդկանց միջոցով: Վերցնում են հաշորդ օրվա ծրագիրը եւ նշումներ են անում ձեզ համար՝ նշում են յուրաքանչյուր փուլում ուժեղագույն ձիերին: Դուք, արդեն ցուցումների համաձայն, նրա համար էլ եք տոմսեր գնում:

Որոշել էի հոբելյանական նյութ գրել ձիարշավարանի մասին: Ջրուցեցի տնօրեն Ա. Մելդերի հետ: Նա կանչեց Տոլյա Իվանովին:

Խնդրեմ, ասաց, երիտասարդ տաղանդ է:

Իվանովի հետ իջանք բուֆետ: Ես ասացի .

Ավելորդ փող կա մոտս՝ մի ութսուն ռուբլի: Ի՞նչ խորհուրդ կտաք:

Ի՞նչ առումով:

Մրցավագքը նկատի ունեմ:

Ի վանովը վախեցած նայեց ինձ:

Մի վախեցիր, ասացի, սադրիչ չեմ, թեև լրագրող եմ:

Ես չեմ վախենում:

Վերջը «բացվեց» .

Դուկելը (այսինքն՝ Դուկալսկին) խաղում է եկվոր լատիշների միջոցով: Շատ լուրջ խաղ է: Տանում են մրցափուլն ամբողջությամբ, մինչև վերջին կոպեկը: Բայց դա արդեն վերջում, երբ խաղագումարները բարձր են: Իսկ առաջին երեք մրցափուլերում կարելի է շահել:

Գրպանիցս հանեցի հաջորդ օրվա ծրագիրը: Տոլյան վերցրեց մատիտը...

Երրորդ մրցափուլից հետո ես ստացա վաթսուն ռուբլի: Հետագայում պարբերաբար շահում էինք երեսունից ութսուն ռուբլի: Ցավոք ձիարշավարանը շաբաթական միայն մեկ օր էր խաղագումարներ ընդունում:

Ամռանը Տոլյան կոտրեց ոտքն ու գույգ անրակոսկրերը: Հարբած դուրս էր ընկել տաքսուց:

Ձիարշավարանը նրա համար վերջացավ: Արդեն մի քանի տարի է «քամու ախոյանը» բարապան է Մյուդիում: